և պատժել են և կարող են պատժել իւրեանց իրաւունքները բռնաբարողներին, քրդերը նորանց հետ շատ ակնածութեամբ և պատկառանքով են վարվում։ Քրդերը միշտ թալանե են, յափշտակել են անտէր ապրանքները, որոնց տէրերը քաջասրտութիւն չեն ունեցել գործով ապացուցանալու թէ իւրեանց ստացուածքները իւրեանց սեփհականութիւնն է։ Քրդերը այդպիսեաց միշտ տուել են անողոք դասերը, թէ այն գիւղական հասարակութիւնը, որ քաջասրտութիւն չ'ունի իւր սեփհականութիւնքը պաշտպանելու, անարժան է նրանց վայելելու շնորհին։ Դորա համար էլ քրդերի հարստահարութիւնները վտանգաւոր բնաւորութիւն չ'ունեն և ինքն ըստ ինքեան վերջանում են, մի քանի գիւղական համայնքների անձնապաշտպանութեան համար ցոյց տված օրինակները տարածվում են հետզհետէ բոլոր գիւղերի մէջ։

Կառավարութեան հարստահարութիւնքը նոյնպէս մշտնջենաւոր չեն, մանաւանդ, որ, երբ դոքա դաշնաւորված չեն, դրամատէրերի հետ։ Դոքա կախված են կառավարութեան ձևի և ուղղութեան փոփոխութիւնից։

Նա, որ դարաւոր ժամանակով, սկսած պատմական ամենահին անցեալից, հարստահարել է, այժմ հարստահարում է և յոյս ունի ապագայում աւելի ընդարձակ չափերով հարստա-